ՆՈՐ-ԴԱՐ

№ 9. Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի Ուրբաթ 20 Յունվարի **1884** Ուրբաթ 20 Յունվարի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ա Ր Ի № 9.

Տարեկան 10 րուբլի. վեց ամսվա՝ 6 րուբլի. երեք ամսվա՝ 3 ր. 50 կ.
Հասամբ 5 կոպեկ.
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ մխիթարյան խմբագրատանը։

Խմբագրության հասցեն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի ոչ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարության վճարը բաժնի 2 կ. բնկալմանի համար՝ կը փնտրատվի

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

Ա Մ Ե Ն Օ Ր Ե Ա Յ Թ Ե Ր Թ Ը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ԹԻՖԼԻՍՈՒՄ **1884** ԹՈՒԱԿԱՆԻՆ ՅՈՒՆՎԱՐԻՑ։

Ծ Ր Ա Գ Ի Ր

I. ՏԻՐՈՒԹԵԱՆ կարգադրություններ։
II. Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ո Ղ, յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խնդիրների մասին։
III. ՓՐՈՆԻԿՈՆ—լուրեր, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, պատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։
IV. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ—Ռուսիայից և արտասահմանեան ամենայն տեղերից։
V. ՔԱՂԱՔԱԿԱՆ — Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։
VI. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։
VII. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։
VIII. Ա Ռ Ե Ւ Տ Ր Ա Կ Ա Ն տեղեկութիւններ։
IX. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ֆելիետօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։
X. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի. 6 ամսուան 6 րուբլի, հասով 5 կոպ.

Խմբագիր հրատարակիչ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Ծանոթ. „ՆՈՐ-ԴԱՐՐ“-ը կունենայ թղթակիցներ եւրոպական գլխաւոր և նշանաւոր քաղաքներում. նոյնպէս Թիւրքիայում և Պարսկաստանում։ Թերթին բաժանորդ գրուել կամ խմբագրութեան հետ հաղորդակցութեան մէջ մտնել ցանկացողները դիմում են խմբագրութեանը հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Редакція „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „NOR-DAR“.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Օսմանեան կայսերութիւնը։
Քաղաքական. —

Քաղաքական։
Թատերագրութիւն։
Հիւսիսային նամակներ։
Ցայտարարութիւններ։
Բանասիրական.—Կրկնութիւն շարունակութիւն։ Համար առաջարկները
Առաջարկ—Տիզիկատոր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

(Vortbildungsschulen)

(„Նոր-Դարի“ Էյսլցկի Թղթակցից)

Որովհետև մի հասարակութիւն քանի գնում առաջանում է, այնքան նորա պահանջները աւելանում են, այս հիման վրայ և մեր հասարակութիւնը լինելով մի և նոյն ճանապարհն վերայ, քանի գնում, այնքան նորանոր, այնքան բազմակողմանի պահանջներ է զգում։ Որովհետև մեր զարգացումը և կենսական պահանջները մեծ չափով համապատասխան և կանոնաւոր չեն ընթանում, այս պատճառաւ մենք անկարող ենք բաւականութիւն տալ մեր օր աւուր վերայ աւելացող պահանջներին և հետևաբար մեր կեանքը հաւասարակշռութեան մէջ չէ—նա տատանվում է։ Մեր հասարակութեան բանիմաց անդամները այս երևոյթը նկատելով, չատ անգամ հրաւիրել են հասարակութեան ուշադրութիւնը այն հանգամանքի վերայ, որ մենք մեր կենսական պահանջներին համապատասխանող ուսումնարաններ ունենայինք։ Ի հարկէ մեր ժողովրդական ուսումնարանները, մինչդեռ և ձգտելին վերոյիշեալ պահանջները լրացնել, նորա անկարող պէտք է լինէին, որովհետև նորա կարող են ծառայել ազատ կեանքին միայն սկզբնական ընդհանուր կրթութեան մասնակարաբերու համար։

Մի և նոյն պահանջները զգացել է և զգում է Եւրոպան, որը կեանքի փոփոխութիւնից եկել է և գալիս է այն եզրակացութեանը, որ զանազան մասնաւոր նպատակների համար պէտք է ծառայեն զանազան մասնագիտական ուսումնարանները, և ահա ծագել են հարցեր կիւրակիօրեայ, արհեստաւորաց, առևտրական և զանազան մասնագիտական ուսումնարանների։ Այս տեսն և լինելորդ դարու բոլոր ձգտումները կենդրոնանում են նորանում, որ, ինչքան հնարաւոր է, այնքան բազմակողմանի նպատակներին ծառայող ուսումնարանները ունենալ, կեանքի բազմակողմանի պահանջներն աւելի հեշտութեամբ լրացնելու համար։

Ջը գնում, ինչքան ինձ կաջողվի, բայց ես նպատակ ունեմ այցելել և ուսումնասիրել մի շարք գերմանական ուսումնարանների և ինչքան որ կարողութիւնս և միջոցս կը ներեն, ծանօթացնել այդ ուսումնարանների հետ մեր ուսումնարանական գործով հետաքրքրուող ընթերցողներին։

Ես կը ցանկալի այստեղ նախապէս ցնել, որ, ինչպէս ներկայ յօդուածս առարկայ ուսումնարանը, նոյնպէս և այլ ուսումնարանները ներկայացնելով մեր ընթերցողի ուշադրութեանը, ես ցանկութիւն չեմ ունեցել հիմա տեսնել մեզանում առաջարկած ուսումնարանների լրագործումը։ Ի հարկէ, այս կեանքը, որը ծնել է այս ուսումնարանները, բոլորովին այլ պահանջներ և նպատակներ ունի քան մեզ, ուստի սկսած մեր ամենացածր ֆրէօբելեան ուսումնարաններից մինչև ամենաբարձր ուսումնարանները այլ ծրագիր և այլ ուղղութիւն պէտք է ունենան։ Մենք պէտք է աշխատենք, ինչքան կարելի է, աւելի ճիշտ ըմբռնել Եւրոպայի քաղաքակրթութեան օրէնքն և յետոյ նորան տեղափոխել մեր հայրենի հողի վերայ, և, եթէ կարելի է այսպէս ասել, այդ կրթութեան ոգով պատուաստել մեր կեանքը։ Եւ ինչ չափով աջողակ լինի այդ պատուաստը, նոյն չափով նա աւելի պտուղներ կը խոստանայ մեզ ապագայում։

Եթէ ինձ աջողի մի ծառայը գաղափար տալ ընթերցողին, թէ ինչ ուսումնարաններով և ինչպէս է ձգտում օրինակ Գերմանիան իւր առօրեայ պահանջներին բաւականութիւն տալու, ես ինձ հասած կը համարեմ իմ նպատակին *)։

*) Իմ նպատակն է ընթերցողի ծանրհրաժեշտութեան համար հրատ, անմշակ նիւթի մատակարարել, իսկ մեր խորհրդածութեան գլխաւոր նիւթը ակտ է լինեն, և հարկէ, վերջին ընդհանուր ուսուցչական ժողովի առաջարկութիւնները, որոնք պէտք է ներկայացնէին մեր կեանքի բազմակողմանի պահանջները և այդ պահանջները լրացնելու միջոցներն ու եղանակները։ Լաւ չէ, որ մինչև հիմա մեր հասարակութիւնը չը կարողացաւ ծանօթանալ, ինչպէս հարկն է, այդ ժողովի գործունէութեան հետ, որ ա-

վրանաբնակ քիւրդերը կամ Թիւրքիայում ցրուած զարափափախներըն էլ պէտք է ունենային պաշտպանիչներ, ինչպէս որ այդ ունեն Աւստրիայում ունգարացիներն, բայց չունեն նոյն Աւստրիայում սլիգանները։

Այնու ամենայնիւ կամեցել են հասկանալ, որ մենք իբրև թէ առաջարկում ենք Թիւրքիային օրինակելու աւստրիական վարչութեան կազմակերպութիւնը։ Եւ այդպէս են կամենում հասկանալ մեր ասածը, թէպետև նոյն յօդուածի վերջումը մենք ասում ենք, Թիւրքական պետական անձինք ի նկատի առնելով, որ «խելօք պետական անձինք ուսումնասիրում են իրենց ղեկավարութեան յանձնուած պետական օրգանիզմը և այնպէս են գործում»։

Իսկ թէ մենք Թիւրքիային Ասիական Աւստրիա ենք անուանում այդ ճիշտ է, ինչպէս էլ որ միակ փրկութիւնը Թիւրքերի համար այն ճանապարհն ենք համարում, որի վերայ ընթանում է Աւստրիան։

Այդպէս ոչինչ նշանակութիւն չունի թէ մի պետութիւն մեծացել է միանգամ պատկներ կապելով, թէ սրով և արիւն թափելով։

Աւստրիան էլ գնալով նահանգներ կորցնում է. մի և նոյնը կատարվում է և Թիւրքիայի հետ։ Աւստրիան եթէ այս տասնեակ տարուայ ընթացքում ոչինչ էլ կորցրեց, մեկ գլխաւոր պատճառն էլ այն է, որ իւր անցեալ ներքին քաղաքականութեանը մէջքը շուռ տուեց։

Աւստրիայի գոյութեան մի գլխաւոր և ամենից գլխաւոր հիմքը երկրից գալիս է, նոյնպէս և Թիւրքիայինը։ Այդ երկու պետութիւնների գոյութիւնը յենուած է միւս մեծ պետութիւնների համաձայնութեան վերայ։ Պատերազմի ժամանակ, խռովութեան ժամանակ թշնամին միշտ կարող է ինչպէս Աւստրիայում, նոյնպէս Թիւրքիայում հպատակ ազգութիւնը տիրապետող իշխանութեան դէմ կանգնեցնել։ Այդ ժամանակին միշտ են թարկուած են թէ Աւստրիան և թէ Թիւրքիան։ Աւստրիան այդ լաւ ըմբռնելով վաղուց է որ ըսկսել է հեռզհեռէ հպատակ Ունգարացիներին, Չեխերին, Լէհացիներին, Խորվատներին ինքնավարութիւն տալ, զանազան չափով ի հարկէ։ Եւ ուրիշ ինչ ելք ունի, եթէ ուզում է իւր գոյութիւնը շարունակել։

Թիւրքիան էլ ասում ենք, իւր գոյութեան համար պէտք է հետևի Աւստրիային, պէտք է յոյներին, տաճկահայերի արտօնութիւնները ճանաչէ, պէտք է նրանց թողնէ, որ ինքնուրոյն զարգանան իրենց առանձնայատկութիւններով։

Այդպէս չարաւ։ Սերբիան, Բուլղարիան ձեռքից գնացին. յամառութեամբ շարունակելով Թիւրքիան իւր կազմակերպութեան հակառակ և անբնական ընթացքը, մի

Նախ քան իմ վերջ առած ուսումնարանի նեղկայ գրութիւնից սկսելը, ես աւելորդ չեմ համարի մի երկու խօսք ասել նորա պատմական ծագման մասին։

Ուսումնարանները, իբրև մարդկութեան կեանքի ծնունդ, ընթացել են այդ մարդկութեան կեանքի պատմական շաւղով։ Ինչպէս որ մարդկութիւնը հետզհետէ դուրս է եկել իւր նեղ և սահմանափակ ձգտումներից և աւելի նոր, աւելի ընդարձակ նպատակներ է դնել, այնպէս էլ ուսումնարանները, հետզհետէ դուրս գալով իւրեանց սահմանափակ ձգտումներից, ձգտել են աւելի յարմարուել կեանքի հանգամանքներին, աշխատել են աւելի բաւականութիւն տալ կեանքի պահանջներին։ Եւ ահա առաջին անգամ Գերմանիայում ծագում է այսպէս անուանեալ կիւրակիօրեայ ուսումնարանները

աչն է, որ իւր անցեալ ներքին քաղաքականութեանը մէջքը շուռ տուեց։

Աւստրիայի գոյութեան մի գլխաւոր և ամենից գլխաւոր հիմքը երկրից գալիս է, նոյնպէս և Թիւրքիայինը։ Այդ երկու պետութիւնների գոյութիւնը յենուած է միւս մեծ պետութիւնների համաձայնութեան վերայ։ Պատերազմի ժամանակ, խռովութեան ժամանակ թշնամին միշտ կարող է ինչպէս Աւստրիայում, նոյնպէս Թիւրքիայում հպատակ ազգութիւնը տիրապետող իշխանութեան դէմ կանգնեցնել։ Այդ ժամանակին միշտ են թարկուած են թէ Աւստրիան և թէ Թիւրքիան։ Աւստրիան այդ լաւ ըմբռնելով վաղուց է որ ըսկսել է հեռզհեռէ հպատակ Ունգարացիներին, Չեխերին, Լէհացիներին, Խորվատներին ինքնավարութիւն տալ, զանազան չափով ի հարկէ։ Եւ ուրիշ ինչ ելք ունի, եթէ ուզում է իւր գոյութիւնը շարունակել։

Թիւրքիան էլ ասում ենք, իւր գոյութեան համար պէտք է հետևի Աւստրիային, պէտք է յոյներին, տաճկահայերի արտօնութիւնները ճանաչէ, պէտք է նրանց թողնէ, որ ինքնուրոյն զարգանան իրենց առանձնայատկութիւններով։

Այդպէս չարաւ։ Սերբիան, Բուլղարիան ձեռքից գնացին. յամառութեամբ շարունակելով Թիւրքիան իւր կազմակերպութեան հակառակ և անբնական ընթացքը, մի

հարցը։ Կիւրակիօրեայ ուսումնարանները նոր բան չեն մանկավարժութեան պատմութեան մէջ. նորա սկիզբը դրվում է 1527 Լուտերականներից։ Սկզբում ունէին ամենանեղ կրօնական նպատակ։ Կիւրակի օրը Հաչից յետոյ հաւաքվում էին աշակերտները և պարապում էին քրիստոնէականի հարց ու պատասխաններով։ Յետոյ, երբ շաբաթուան օրերը չէին կարող բաւականութիւն տալ ժողովրդական ուսումնարանին, այս կիւրակիօրեայ ուսումնարանները դարձրին այսպէս անուանեալ „կրկնութիւն ուսումնարանների“ (Wiederholungsschulen)։ Անցնում է 200 տարուց աւելի միջոց և ահա այս ուսումնարանները մուտք են գործում հասակաւոր երիտասարդները և պարապում կրօնագիտութեամբ, կարդալով և գրելով, որպէս զի նրանց առաջուայ սովորածները կրկնեն և առաջ գնան զբաղմունքների մէջ։

Յետոյ առաջանում է մի նոր տեսակ կիւրակիօրեայ ուսումնարաններ այն նպատակով, որ այն աշակերտները, որոնք զանազան հանգամանքներով անկարող են շաբաթական բոլոր պարապմունքին յաճախել, նրանց պակասները լրացնեն կիւրակի օրերում։ Այս վերջին տեսակ ուսումնարանները անուանուեցան „օժանդակիչ“ (Nachhülfeschulen) ուսումնարաններ։

18 դարու վերջերում սկսում է երևակել մանկավարժ Պեստալոցցու գործունէութիւնը, որը և միջի այլոց մեծ

ւելի անհրաժեշտ էր մանաւանդ ուսումնարանական գործով հետաքրքրուող այն անձանց, որոնք բազդ չէին ունեցել ներկայ լինել ժողովին։ Այդ էն տարի և կէսը անցաւ, եթէ մի այսքան էլ անցնի, իմ կարծիքով այն ժամանակ շատ ուշ կը լինի, որովհետև ընդամենը մի տարի կը մնայ մինչև հեռաւոր ընդ. ուս. ժողովը, և այդ կարճ միջոցում ոչ նոր ծրագրի լրագործումից կարելի կը լինի որոշ եզրակացութիւնների գալ և ոչ էլ միջոց կը լինի արդէն առաջարկած բազմակողմանի պահանջների հետ ծանօթանալու, լուրջ մտածելու և պատրաստելու առաջիկայ ընդհանուր ժողովը աւելի աջողնաւոր կացութեան համար։

որ Օսմանեան պետութիւնը ևս ստոյգ նիւթ—Օսմանեան պատմութիւն։

Հեղինակ Նասրեթին Հոճան Ալ-Խալիլ։

Հեղինակը ի Շարոխէն է եւ ի 1845—1875 տարիներ եղած է Ռումելիոյ „վիլայեթի ե օժտուած“ Նեմրուտ Մեհմետ փաշայի քարտուղարը, որպէս այդ ինքն կը պատմէ։ Հետեւաբար ականատես եղած է այն դէպքերուն, որոնք կը նկարագրէ։ Ինչպէս կը տեսնուի ինքնագրէն, որ մեզի հասած է հեղինակին ձեռագրէն, ան գրած է զանազան ժամանակներ, ինչպէս որ յիշողութիւնը կ՚օգնէր իրեն։ Ուստի ոչ միայն ամսաթիւերը, այլ նաեւ պատմական դէպքերուն շարադրութեան կարգը ամենեւին հետեւած չէ ժամանակագրական կարգի։ Ինչպէս կ՚երեւի, ան ունեցած է նպատակ մը միայն, այն է՝ գրի առնել իր ականատես եղած դէպքերը, ինչպէս որ կը յիշէր զանոնք։ Ասոր համար ալ ան ամենեւին չէ հետեւած որեւէ պատմական կարգի, այլ գրած է ինչպէս որ կը յիշէր։ Ուստի ինքնագրին մէջ կ՚երեւին ամենայն պարզութեամբ ինքնագրի հեղինակին ոճին յատուկ թերութիւնները։ Ան ոչ միայն կը խօսի ինքնիրմէ երրորդ դէմքով, այլ նաեւ կը գործածէ ամենայն ազատ

ըլենալ կամ Տրնեատի վերայ չէ մտածում և վտանք Աստուծոյ, խոտլացող մեծամասնութիւնը լոհական մարդիկ են։ Տրնեատում մեկն անհանգիստ սահմանադրութիւնն է ցանկանում մեծանալ Խաղիայի հետ, այն ինչ մեծամասնութիւնը դղում է, որ նեվթական դանազան օգուտները կապում են Նորան Աստուծոյի հետ։ Իրրեղենսիմը բոլորովին ընկնում է և շուտով կը գայ նորա վերջը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

„Գրօֆքա“ լրագրերը հաղորդում է, որ յունվարի 6-ին առաւօտ պարահանդիսից, յոգուտ Թիֆլիսի ազնուական պալոցի մնաց գուտ արդիւնք 1,600 ր.

***

„Русскія Вѣдомости“ լրագրին գրում են Վարշավից հետեւեալը. „Մօտ ժամանակներում մի հարուստ տիկնոջ մահից յետոյ, ժառանգները վաճառում էին մեծագոյ կալքը։ Մի պարոն Կ. տեսնելով և թիւս ուրիշ առարկաների, գնեց և բազկաթոռներ։ Կ. ցանկալով նորոգել տալ այդ բազկաթոռները, տանը պոկեց նորանց երեսի վերայի պատառ կտորները և որքան զարմացաւ պ. Կ. երբ որ այդ բազկաթոռների կտորի մէկի տակ գտաւ դարսած 3,000 ր. գրաւական թղթեր. իսկ մնացի կտորի տակ— 100 րուբլոնոց թղթադրամներ 1,200 րուբլու չափ։ Կ. վերադարձրեց պրամները ժառանգներին, վեր առնելով նրանցից միայն 200 ր. որոնցից 100 ր. զոհեց չքաւոր ուսանողների ուսման վարձի համար, իսկ 100 ր. բաժանեց աղքատներին“։

***

Խառն պատկերի առիթով Անգարիայում առաջ եկած վէճի մասին՝ պատմում են հետեւեալ անցքը։ Մի քանի բարեկիրթ ունգարական արիստոկրատներ մտադրուեցան լինն օրուայ ընթացքում շարունակ ժողովուել և ազօթել Տիրամօր, որ նա կատաբէ նրանց սրտի ցանկութիւնը, այն է, որ քրիստոնեաների և հրէաների միմեանց հետ ամուսնանալու օրէնքը չընդունուի։ Այժմ այս արիստոկրատներն են հոգով խնդում են, որովհետեւ այս ամուսնութիւնը ունի. ա) սովրեցնել աշակերտին ինքնուրոյն և գիտակցաբար ընթերցանութիւն, նոցանում ընթերցանութեան ցանկութիւն զարգացնելու համար, զարգացնել էսթէտիկական Ճաշակ և բարոյական կրթութիւնը առաջ տանել և բ) առօրեայ կեանքում գործնական (գլխաւորապէս առևտրական) թէ գրաւոր և թէ բանաւոր պատշաճապէս արտայայտելու ընդունակութիւն։

Վերոյիշեալ նպատակներին հասնելու համար ընթերցանութեան դասագրքերը այնպէս են կազմուած, որ նոքա գործնական նպատակներին ծառայելուց զատ, ներգործէին աշակերտների կրօնական, բարոյական և էսթէտիկական զգացմանց վրայ։ Ընթերցանութիւնը պէտք է լրացնէ բնական գիտութեանց պակասող տեղերը և որ գլխաւորն է, յարուցանէ սէր դէպի ընթերցանութիւնը, աշակերտների ընդհանուր զարգացման ապագայ աղբիւրը։ Էսթէտիկական զգացմունքները զարգացնելու համար ընտրուած են ընտիր հատուածներ գերմանական դանազան կլասսիկներից։ Աշխարհագրութիւնից տեղեկութիւնները տալու համար ընթերցանութեան դասագրքում գետեղուած են Սաքսոնիայի համառօտ նկարագիրը, մի քանի պատկերներ այլ և այլ աշխարհներից և մարդկանցից, այդ տեղեկութիւնները ընդարձակելով աւելի ջրջակայքի մասին։ Համառօտ գաղափար բնութեան երեք տարերց մասին նոքա նախ օրէնքը չընդունուեցաւ լինն ձայների առաւելութեամբ, այսինքն՝ աղօթքին նուիրած լինն օրուայ թիւով։

***

Փարիզի սկանդալից յառաջացած օգուտը։ Փարիզից գրում են գերմանական լրագիրներին, որ Սարա-Բերնարի՝ Մարի-Կօլոմբիէի բնակարանում սրած սկանդալի չնորհիւ, վերջինն „Memoires de Fara Barnum“ գիրքը ձեռքէ ձեռք է վաճառուում։ Ներկու տարուայ ընթացքում վաճառուած է 95,000 օրինակ։ Մեհամաճառութիւնը դրամից օգուտ քաղելով՝ գրքի գինը բարձրացնում է, այնպէս որ վերջին օրերում նախկին 3 ֆրանկ գնի փոխարէն, բուլվարների վերայ նորա համար առաջարկում էին 20 ֆրանկ և չէին դանում, որովհետեւ բոլոր լոյս տեսածը սպառուած է։ Լէյպցիգից, Շտուտգարդից, Բերլինից և ուրիշ շատ քաղաքներից 15,000 օրինակների համար պահանջներ են հասած։ Պահանջում են նոյնպէս Իտալիայից և մանաւանդ Ռուսաստանից։ Ֆրանսիական գաւառական քաղաքներից հեռագրները տեղում են տասնեակներով։ Նիւ-Եօրքի և Չիկագօի գրավաճառները իրենց պատուէրները զրկում կում են Կաբէլով (ովկիանոսի միջով անցած հեռագրական թել)։ Եթէ դորա վերայ աւելացնենք և այն՝ որ հետաքրքրութիւնը խիստ յուզուած է և Բելգիայում, Զուիցերիայում, Հոլանդիայում, Իտալիայում և Անգլիայում, այն ժամանակ կարելի կը լինի երևակայել թէ պահանջը որքան մեծ է այդ գրքի համար։ Մինչև մի շաբաթը, նորքն լոյս կը տեսնի 100,000 օրինակ, որի վերայ այժմ աշխատում են տէնդային չտապով։ Փարիզի գրավաճառները հաստատում են որ այդ „Memoires“-ներից կը տպագրուեն 300 —400 հազար օրինակ։ Մարի-Կօլոմբէյն այդ գիրքը դուրս է հանել իւր հաշուով և իւրաքանչիւր օրինակից գուտ արդիւնք ունի 1 ֆր. 50 սանտիմ։ Նոր օրինակները կը վաճառուին հասը 3 ֆր. 50 սանտիմով։ Պժուար չի լինիլ այժմ երևակայել թէ գրանից որքան մեծ վոգեր կը սառնայ նաւ Մարի-Կօլոմբյէին մնում է չնորհակալ լինել Սարա-Բէրնարից, որ նրա յորձանքով հարստացրաւ։

«ՆՈՐ-ԴԱՐԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ
(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

17 ՅՈՒՆՎԱՐԻ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրեաների վերաբերեալ օրէնսդրութեան վերաքննութեան կոմմիսիան առ այժմ ունեցել է միայն մի նիստ, որից յետոյ վճռել է ձեռնամուխ լինել նիւթերի ժողովման և տպագրութեան։

Ձմերան ընթացքում ոստիկանները երկու կամ երեք մասնաւոր խորհուրդներ կոմմիսիայի նախագահի մօտ, անդամների միմեանց մէջ ունեցած հայեացքների համար։

ԿԱԶԱՆ. Նահանգական ազնուականութեան ժողովը որոշեց. միջնորդել, որ կառավարութիւնը սահմանէ մի բանկ՝ հողատէր ազնուականներին երկար միջոցով դրամական փոխառութիւն տնելու համար։

ԿԻԵՎ. Երեկ ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեցաւ Զիբլինսկին, որը յայտնի է Հարաւ—Արևմտեան երկրի էտնօգրաֆիական աշխատութիւններով և Թուսիայի գործարանական և երկրագործական արդիւնաբերութեան վերաբերեալ հետազոտութիւններով։

ԲԵՐԼԻՆ. Պատգամաւորների ժողովում վինդհօրսթի գրած հարցին, թէ արդեօք այս անգամ լինելու է մայիսեան օրէնքների վերանքննութիւնը (կաթոլիկ եկեղեցու դէպի տէրութիւնը ունեցած յարաբերութեանն է վերաբերում) գատաւորների մինիստրը. անպատասխան թողեց, իսկ պատգամաւոր Եանուշևսկու հարցմանքին պատասխանեց, թէ կարդինալին վճռուած չէ վերադառնալ Հռոմից, որովհետեւ Լեհայիները առաջուայ նման նորան գահերեց են համարում և Լեզոխովսկու ներկայութիւնը կարող է սպառնալ եկեղեցական խաղաղութեանը։

18 ՅՈՒՆՎԱՐԻ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պետերբուրգում գուարճութիւնները կատարեալ գերութեան մէջ են։ Նոցին Կայսերական Մեծութիւնների Գատչինայից Պետերբուրգ տեղափոխուելուց յետոյ, մայրաքաղաքը կենդանութիւն է ստացել։ Գլխաւոր փողոցները լի են կառքերի և անցուդարձ անողների բազմութեամբ, մանաւանդ կայսրի և Կայսերուհու երկու ձի լծած սահնակով տուրբական զբօսանքի ժամանակ։ Բարձրագոյն պալատականների ներկայութիւնը քաղաքում և շատ պարահանդէսները շահաւէտ տզդեցութիւն ունեն նաև առևտրականութեան վերայ։ Պարահանդէսներից և ընդունելութիւններից առաջ ժամանակ երևելի են Ֆրանսիական դեսպանի ընդունելութիւնը, տգդային լուսաւորութեան մինիստրի ընկերոջ իշխան Վօլկոնսկու բառուտը և նկարիչ Մակովսկու երեկոյթը։ Բայց ամենից շքեղ էր ձմեռային պալատի յունվարի 16-ին եղած պարահանդէսը։ Դահլիճները երևելի էին իրենց հոյակապ զարդարանքներովը և ճաշակովը, հագուստները — ճոխութեամբ և պարերը—ուրախութեամբ։ Պարահանդէսի կենդրոնն էր, ինչպէս ամեն ժամանակ Նիկոդայոսեան դահլիճը լուսաւորած ճրագներով և սիւների մօտ շարած կանաչներով և բնական ծաղիկներով։ Սէքի էին ընկնում թագաւորութեան հանդիսի միջոց ընծայած ափսէները։ Ձիշտ 10 ժամին թագաւորը թագուհու հետ և Կայսերական տան բոլոր անդամները բացեցին պարահանդէսը պօլօնէզ պարով. երկրորդ պօլօնէզը պարեց թագաւորը անգլիական դեսպանի կնոջ հետ, իսկ թագուհին գերմանական դեսպանի հետ. երրորդը պարեց թագաւորը ֆրանսիական դեսպանի կնոջ հետ, իսկ թագուհին թուրքաց դեսպանի հետ. Կադրիլները երեք էին. փոքր պարերն էլ եռանդով առաջ էին գնում։ Կայսրը Կաւալեր զարտի համազգեստով էր, թագուհին սպիտակ առլաս հագուստով, որի գոգը ծածկուած էր ծաղիկներով, վերին մասը՝ վարդերովը իսկ ներքին մասը ջրային սպիտակ ծաղիկներից շինած ծաղկեայ հիւսուածքներով։ Սպիտակ ատլասէ շղէյֆը գործած էր արծաթով։ Գլուխը զարդարուած էր դիադիմով և ջայլամի փետուրներով և վրայի վայլուն մանեակով։ Կէս գիշերին վերջացաւ մազուրկան և սկսուեցաւ ընթրիքը, որը պատրաստած էր Գրօշի և Նորա կից գահլիճներում. Կայսերական ընթրիքը երևելի էր իւր շքեղութեամբը և առատութեամբը. սեղանները չէին երևում արծաթեղէն թանգագին լաֆաթապակեայ, ճենապակեայ անօթների և բնական ծաղիկների տակ։ Երկրորդ ժամին սկսեցին ցրուել։ Հրաւիրուածների թիւը հասնում էր համարեա 3,000 հոգու։

Կարճ ժամանակում Ռուս-Ամերիկական Էլեվատորների ընկերութեան հիմնարկութեան գործը նորից կը մտնի պետական խորհրդի մէջ։

ՎԻԵՆՆԱ. Զը նայելով գերմանական կուսակցութեան չանքերին պատգամաւոր Վաւրմբրանդտի բելյաստախի արած առաջարկութիւնը, որ գերմանական լեզուն ընդունվի իբրև պետական լեզու, կատարեալ անյաջողութիւն գտաւ։

ԿՐՕՆՇՏԱԴՏ. Հարց է բարձրանում, որ Կրօնշտադտը երկաթուղով միանայ մայր ցամաքի հետ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընթացիկ գները։ Յունվարի 19-ին։

—

ՅՈՐԻՆ.—Դասնուկ. պուդը		90—92½ կոպ.
„ Գանձակի	„	85—87½ „
„ Շորագետի	„	1 ր.—1 ր. 2½ կ.
„ Ղազախի	„	60—70 „
„ Երևանի	„	80—82 ½ „
„ Նուխայ	„	— —

Դարձեալ հաղորդակցութեան ձանապարհները ձիհնով կապուած լինելու պատճառով ցորենը փոքր քանակութեամբ է քաղաք մտնում։ Վերոյիշեալ գներով քաղցր ծախսը շարունակվում է։

գլխարկից ամենևին չէիք գանազանի, ձեր մազից երբէք չէր անցնի, որ նա երեկ երեկոյ մազուր նստած ձեր առաջը, ցոյց էր տալիս հպարտութեամբ իւր այն հիանալի նկարը։ Երբ մարդ մտնում է նկարչութեան գահլիճը, ծանօթանում է սորա մէջ նստող աշակերտների գործի և ոգու հետ, նա այդտեղ տեսնում է փոքր ձևով արհեստաւորների եռանդուն մրցումը միմեանց հետ. նա տեսնում է, թէ մինչև իւրաքանչիւրը այդ փոքր արհեստաւորներից աշխատում է իւր ձեռագործը աւելի գեղեցիկ և աւելի կարճ ժամանակամիջոցում արտադրել։ Ահա այստեղ նա տեսնում է նկարչութեան գործնական նպատակը *), այստեղ նա տեսնում է, թէ մինչև լուկասլականը գործնականն, գեղեցիկը օգնականի հետ միացած մի ամբողջութիւն են կազմում։

Յ. Տէր-Միքաէլեանց։

(Կը շարունակուի)

*) Մի այսպիսի հմտութիւնը նկարչութեան մէջ նորան միջոց կըտայ կեանքում իւր ձեռագործը նոյնպէս գեղեցիկ, նոյնպէս Հասպնկ կատարել, որով աւելի ցանկացողներ կը գրաւի և աւելի ժամանակ կը վաստակի։

ԱԼԻՒՐ.—Բէսօնօվ (Рейнике)
քաշին . . . . 13 ր. 70 — 75 կ.
„ կօժուխովի քաշը 14 „ 70 — 75 „
„ Չամչերդևանի
№ 0000 քաշը 12 ր. 75 կ.—13 ր.
„ 000 „ 12 „ 25—50 կ.
„ 00 „ 11 „ 25—50 կ.
„ 0 „ 10 „ 25 կ.—11 ր. 50 կ.
„ 1 „ 11 „ 25—50 կ.
„ 2 „ 10 „ 25—50 „
„ 3 „ 7 „ 75 կ. 8 ր.
„ 4 „ 5 „ 50—75 „
„ Գուռնուխի . պուդը 1 ր. 15 —20 կ.
„ Գանձակի , . . „ 1 ր. —1 ր. 10 „
„ Շորագետի . . „ 1 „ —15 — 25 „
„ Թառն սեռակները „ — —80 — 90 „
Ալեւրի գներուն մէջ նոր փոխհատուցիններ չկան։
Թէպէտ վերոյիշեալ գներով մենք նշանակեցինք Չամչերդևանի ալիւրը և թէպէտ այդ գներով էլ ցարդ ծախերը են եղել, բայց այդ գները ժամանակաւորապէս են եղել նշանակուած։ Քիչ ժամանակից յետ սեռակներուն նոր բաժանումն կը լինի, որոյ համաձայն էլ նոր գները կը նշանակուին։
ԳՈՐԻ.—Սպիտակը. . . . „ 55 — 58 կ.
„ Սևը . . . . . „ 58 — 60 „
Գարեջրի համար . . . . . 67 — 65 „
ԲՐԻՆՁ. աքսուայ . . . . „ 2 ր. 70—90 կ.
„ Նուխայ . . . . „ 1 „ 55—60 „
„ Թառը սեռակներով „ 1 „ 45—50 „
Դարձեալ դրուելիքները առ ժամանակ անփոփոխ կը մնայ։
Շուկայի վերայ լաւ ակուռ. բերնէ չը կայ.
ԱՂ.—Ռուսկայի . . . . պուդը 67—70 կ.
„ Ղուլքի . . . . . „ 1 ր. 7½—10 „
„ Կաղզուանի . . . . „ 72 — 75 „
„ Բազուի . . . . . „ 30—32½ „
Ռուսկայի աղը սկսում է բարձրանալ։
ԻԻՂ.—Օդեսայի . . պուդը 11 ր.— 45— 50 կ.
„ Նիժեգորոդակի „ 12 „ —50 կ. 75 կ.
Գաւառներից սաղցուած իւղի պաշար դեռ բաւական կայ։
ՇՈՒՔԱՐ.—Բրօդսկի . . պուդը 7 ր. —82½ կ.
„ Բրօդսկի 6квшій сортамент
„ Մանրադէ. 6—8 ֆ. „ 8 „ 27½—30 „
Տարեմուտը անցնելու պատճառաւ մանրադէսի գինը պակսեցաւ։
Պաշարը աննշան է։
„ Կարատաճ . . . . . „ 8 „ 55—57 կ.
Թէպէտ այս մէջտղ շաբաթի մեծ պաշար կար քաղաքում և գինը պէտք է ընկնէր, բայց Բաթումի Ճանապարհը փչացած լինելու պատճառաւ վերոյիշեալ գնով դեռ առաջախտը շարունակվում էր. այժմ Բաթումի Ճանապարհը մաքրուած լինելու պատճառաւ դարձեալ մեծ պաշար կատարուի և հեռագիրն շաբաթի գինը կը պակասի։
Օդեսայում գինը . . . . . 7 ր.
ՇԱՔԱՐԱԻԱՁ. Օդեսայի պուդը 6 ր. 25—30 „
„ Մարսէլի „ — —
Պաշարը միջակ քանակութեամբ։
ՏՐԱՆԶԻՏ ՇԱՔԱՐԸ. . . պուդը. 7 ր. 50—55 կ.
Առ ու ծախը Թոյլ։
ԿՕՓԻ.—Մօքքօ—պուդը. 22 ր.—50 — 75 կ.
„ Ռիօ „ „ 13 ր.—13 ր. 50 կ.
Տրամադրութիւնը Թոյլ։
ԹԻՑ.—Կ. և Ս. Պօպով եղբարց (К. и С. Бр. Поповы).
„ 1 ր. 40 կոպէկանոց.
„ 1 „ 60 „
„ 2 „ — „
„ 2 „ 20 „
„ 2 „ 50 „
500 րուբլուց աւել գումարի համար զեղչ % 10
10-ց մինչև 500 ր. „ „ „ % 9
Գաւառդ փոխանակողները միևնոյն գումարների համար . . . . . զեղչ % 7—8.
ԹԻՑ.—Պօպով եղբարց. (Бр. Поповы) միևնոյն գների համար զեղչ % 19—19½
„ К. и С. Պօպովի եաբլկինն նմանացած սեռակի միևնոյն գների համար զեղչ % 19
Վերջին երկու սեռակների գաւառդ փոխանակողը նշանակած զեղչից % 1—2 պակաս։
ԾԽԱԽՈՑ.—Կուշնարև—Պապկրոս 1-ին և 2րդ սեռակի համար զեղչ % 22—23 կ.
„ 3 „ „ „ 6—7 „
Թամբաքու.—2 րուբլիանոցի համար։ զեղչ. % 15—16.
1 ր. 20 կոպէկանոցի համար % 15—16
80 կոպեկանոցի — „ 7
40 „ „ — „ 6
„ Ամալով — Պապկրոս. 1-ին և 2-րդ սեռակ % 21
„ „ „ 3-րդ սես. % 8—9
„ „ Թամբ. 2 րուբ. զեղչ. % 15—16
„ „ „ 1 ր. 20 կոպէկ. % 15—16
„ „ „ 80 կոպէկան. % 8—9
„ „ „ 40 կոպէկան. % 8—9
„ Բազաբէհանց—Պապկր. 1-ին սես. % 25
„ „ „ 2-րդ „ % 20
„ „ „ 3-րդ „ % 15
„ „ Թամբաքու 1-ին սեռակ % 25
„ „ „ 2-րդ „ % 20
„ „ „ 3-րդ „ % 15
ԿԻՆԱՄՕՆ.—(Դարչին) . . . 11 ր. 80—90 կ.
ՊՂՊՂՆ.—Սէնեգաթօղի . . . սպասուած։
„ վիւս սեռակները 16 ր.—16 ր. 30 „
Պաշարը աննշան է։
ՆԱԽԻ.—1 սո. գանազան գործար. պ. 32—35 կ.
„ 2 „ „ „ 28—30 „
„ Մէրզօևի գործարանից „ 75—80 „
ՄՈՄ.—Կրէստովնիկովի . . պ. 12 ր. 70—65 կ.
„ Օգեսայի . . . . . „ 10 „ 35—30 „
ՄՈՄ.—Տօլչէի գործարանից. 4-նոց. 5-նոց. 6-նոց. 8-նոց. . . պուդը 12 ր. 50 կ.
Փոփոխութիւն առ այժմ չկայ։
Կրէստովնիկովի մոմը յիշեալ գներով գաբաթով քաղցրը վաճառվում է։
ՍԱՊՕՆ.—Տօլչէի գործարանից։
„ 1 սեռակը պուդը. . . . 5 ր.
„ 2 „ „ . . . 3 „ 60 „
„ 3 „ „ . . . 2 „ 80 „
„ Մարմէլօնի „ . . . 4 „
„ Մարսէլը, փուռանոցը և կէս փուռանոցը 4 „ 50 „
ՀՈՒԳՈՒ.—Ձանազան սես. 3 ր. 70 կ.—4 ր.
„ Հալած . . . . . 5 „ 40 „—50 „
Ծախերը շարժում են։
ԶԱՄԻՉ.—(Սաւա) Պարսկաստանի մանուքները պ. 2 ր. 90—3 ր.
„ „ քանակները „ 2 „ 50—55 „
Գնաի չամիչ մեծ քանակութեամբ կայ։
Գները սառիկ ընկնում է։ Օդեսայ չափազանց Թոյլ։
ՆՈՒՇՆ . . . . . 11 ր. 25 կ.—50 կ.
ԿԱՂԻՆՆ (Թխել) . . . . . 3 „ 10 „ — 20
ՕՂԻՆ.—Վաճառվում է . . . . % 7¾—8 կ.
„ առանց տակառի։
ՍՊԻՐՏԸ.— „ տակառով . % 8¾—9 կոպ
Երկուսի արտադրութիւնն էլ շարժում է։
ԲՈՒՀԻ.—Թուշլու-վրաց աշնան կոթածն . . . . . 6 ր. 90 կ.—7 ր.
„ Թուշլու-վրաց գարնան կոթածը . . . . . — — —
„ Թարաք. աշնան ոչխարի 4 „—70—75 կ.
„ Թարաք. գարնան. . . 6 ր. 20—50 „
„ Գանձակի „ գարնան 4 „ 60 „ 70 „
„ Ղազախ—սպասուած — —
„ Շխլու „ — —
„ Ղարաբաղի „ — —
„ Նուխայ-գարնան — —
„ „ աշնան — —
„ Թորատանի „ — —
Գները սառիկ ընկած է, տրամադրութիւնը հետզհետէ Թանում է՝ մանաւանդ Մարսէլից սառցուած անբաղդ լուրերից յետոյ։ Մեայն Թարաքամէ լուրերը մի փոքր քաղցրութեամբ է վաճառվում։ Բուրդի հաւաքողները շատ դանդաղում են ոչխարի նիհարութեանից, որը ըրդի սեռակը փչացնում է։
ՄՈՐԹ.—Ա,ծխի—(Մարսէլի համար)
զոյգը . . . . . 1 ր. 40—70 կ.
„ „ (Դաբաղներէն համար մեծն) զոյգը . 2 ր. 20—40 „
„ Ոչխարին (Մարս. համ.) պ. 5 ր. 20—25 „
„ „ (Օդես. համ.) զոյգ. 1 „ 70 կ. 90 „
Պաշարը սակաւ։
ՏԱԻԱՐԻ ԿԱՇԻՆ. Պաշարը քիչ է։
Եթէ այս միջոցում լինէը քաղցրութեամբ կվաճառուէը . . . . . 8 ր.—8 ր. 25 կ.
ՄԱՐՍԵԼԻ Tampier է (Տանպիեռ) կաշին հանկիկ . . . . 40 ր. 50 կ.—41 ր.
„ „ Cheysson է (Շէյսօնն) կաշին հանկիկ . . . . 37 ր. 50 կ.—37 կ.
ԿԼԱՅՏԿ. Ոչխարնշան կամ մեռ սեռակները . . . . . 18 ր. 60—65 կ.
ՕՂԻՆԴՐ. (Նշադիը) . . . . . 9 ր.—9 ր. 25 կ.
ԲԱՄԲԱԿ.—Երևանի-ամերիկայի սերմից . . . . . 7 ր. 60—70 կ.
„ Երևանի-Փարաւիօղի սերմից . . . . 6 ր. 10—15 կ.
„ Թառնած սեռակը. 6 ր. 30—40 կ.
Ամերիկայի սերմի քանակը քաղցրութեամբ կը վաճառուէը եթէ լինէը։
ԲՈՁՈՁ.—Նուխայ՝ սպասուած — —
„ Խիչմիչիի. Նուսպ. պուդ. 25 — 30 ր.
ԹԷՅԼ.—Կախեթի. սպասուած — —
„ Խիչմիչիի. փոքր քանակութեամբ . . . . . 83 — 85 ր.
ԼԱՍ.—Բոլոր սեռակները էս սպասուած։
ԸՆԿՈՒԶԻ ՈՍՏՂ. (Նապլիս) պաշարը շատ. գինը սառիկ ընկած. պահանջ չը կայ։
ԼՈՒԻՒ ԾԱՂԻԿ.—Ձախաղանց Թոյլ։ Պաշարը շատ.—Գինն է 1 ր. 50 կ.—2 ր.
ՈՍԿԻՆ. Պօլմազիերեան . . . 8 ր. 51—50 կ.
Տաճկաց լիրան . . . . 9 „ 35—37 „
ԱՐԾԱԹՆ. Բազլեանոց . . . . 1 „ 45—47 „
20 կոպէկանոց . . — 23—23½ կ.
—
ՄՕՍԿՈՒԱՅԻ ԲՕՐՍԱՆ, յունվարի 8-ին.
ԲԱՄԲԱԿ.—Երևանի—Ամերիկայի սերմից պատրաստ 10 ր. 35 կ.
„ „ զարգացող սպասուած
ԹԷՅԼ.—Նուխայ. պուդ. . . . . 230—230 ր.
„ Կախեթու „ սպասուած.
„ Խիչմիչիի „ սպասուած։
ՆՈՒՇ — վաճառվում է պ. 13—13 ր. 40 կ.
ԶԱՄԻՉ—(Սաւա) „ „ 4 ր. 40—50 կ.
„ Գաղմիան „ „ 4 ր. 60—70 կ.
ՄԱՐՍԵԼԻ ԲՕՐՍԱՆ 5—17 յունվարի.
ԲՈՒՀԻ.—Թուշլի վրաց գարնան կոթածը.
„ „ . . . . B. 1 ֆր. 30—35 ս.
„ „ . . . . B. S. 1 „ 10—15 ս.
„ „ . . . . B. O. 1 „ 50—55 ս.
„ „ . . . . G. C. 105—110 ս.
„ „ . . . . . M. . . . . 80—85 ս.
„ պաշարը շատ սակաւ։
„ Աշնան կոթածը A. O. 1 ֆր. 65—70 ս.
„ „ . . . . . B. O. 1 „ 60—65 ս.
„ „ . . . . . B. . . 1 „ 35—37½ ս.
„ „ . . . . . B. S. 1 „ 15—17½ ս.
„ „ . . . . . A. . . 1 „ 42½—45 ս.
„ „ . . . . . G. C. . . 105—110 ս.
„ „ . . . G. C. A. 1 „ 20—25 ս.
„ „ . . . . . M. „ 90—95 ս.
„ պաշարը մէջտղ քանակութեամբ։
„ Թարաքիանս գնողան սեռակները։
„ կարնան կոթածն . . . B. 95—100 ս.
„ „ „ G. C. 95—97½ ս.
„ „ „ M. 95 97½ ս.
„ „ „ M. 65—70 ս.
„ աշնան կոթածն . . G. C. O. 97½100 ս.
„ „ „ G. C. A. O. 130—132½ ս.
„ Ղարաբաղի—Թարաքիանս։
„ „ գնողան սեռակ. 85—90 ս.
„ Նուխայ-գարնան — 85—90 ս.
„ „ աշնան A. 130—132½ ս.
„ „ „ B. 117½—120 ս.
„ Թորատանի. B. 160—162 ս.
„ „ մնացած սես. 125—130 ս.
„ վերջին սեռակի պաշարը շատ սակաւ է։
„ ընդհանուր սովորական գինը. % 1½—2
Բրնձի գործերը շատ վատ դրութեան մէջ են. օրեցօր Թանգանում է։ Ամերիկայից պահանջ չը կայ։ Միայն Թարաքամէի համար աննշան պահանջներ են լինում։ Թորատանի այս տարուայ ըրձին չին հատանել, հետևապէս նոր համար ցարդ ծախերը չը կան։
ԲՈՁՈՁ.—Ղարաբաղի և Նուխայ. մեքենայով խոզանած։
„ —5 արշինէնը տուղ 8 ֆ.—8 ֆ. 25 ս.
„ ¾—5 արշինէնը տուղ 8 ֆ.—8 ֆ. 25 ս
„ Նոյն տեղերինը—սրբով ջրացրած 7 ֆ.—7 ֆ. 25
„ Թանիկալ . . . 3 ֆ. 50—75 ս.
„ չխալը . . . . 2 ֆ. 50 ս.—3 ֆ.
ԹԷՅԼ.—Նուխ. և Ղարաբ. գոծարան. 40—45 ֆ.
ԼԱՍ.—Ռուշան . . . 6 ֆ. 50—75 ս.
„ Խորասանի . . . 3 ֆ. 3 25 ս.
„ Նուխայ . . . 9 ֆ. 50 ս—10 ֆ.
ՖՐԻԶՕՆԼՏՏ. Նուխայ . . . . 1 ֆ. 50 ս.—2 ֆ.
սովորական գինը. % 1—1½
Բուժոյի գործերը նոյնպէս Թոյլ է։ Մի փոքր ժամանակ առաջ եղած շարժումները չը շարունակուեցան. գործերը գինն է անորոշ է։
ՈՁԹԱՐԻ ՄՈՐԹ. . . . . 105—110 ֆ.
ՏԱՒԱՐԻ կաշի . . . . . 150—155 ս.
ԱՅԾԻ ՄՈՐԹ 12 հատը . . . . . 32—40 ֆ.
սովորական գինը. % 4
ԼՈՒԻ ԾԱՂԻԿՆ.—Վաճառվում է 100 քիլօն 50—75 ֆր. գինը. % 4
Սառիկ ընկած է. գինն է հարցնող չը կայ։
ԸՆԿՈՒԶԻ ՍՍՏՂ. Ցածր սեռակները միշտ մնում են անվաճառ։ Ընդհանուր սեռակը . . . . 150—160 ֆր.
գինը. % 2
ՇԱՔԱՐ . . . . . 66—66½ ֆր
առևտուրները սառիկ Թոյլ են։
Ընդհանրապէս շարժումները չը կան։

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻԿԱՑ 1884 ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐՔ

Կը հրատարակվի նոյն ուղղութեամբ և դիրքով

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի. կիսամեայ 5 ռուբլի.

Թիֆլիսում տօտրագրվել կարելի է 1) Խմբագրատունը, 2) ս. Շահվերդեանի գրավաճառանոցում, 3) ս. Զ. Գրիգորեանի գրադարանում, 4) ս. Շահխենեանցի Ճխտոյտի խանութում (Ազծրունու գալերէյում) և 5) ս. Տէր-Յովսէփեանցի խանութում (Միրզոյեվի տունը, „Կաւկաս“ հիւրանոցի տակը։ Իսկ օտարաքաղաքացիք Լոզ բարեհաճեն դիմել Խմբագրատուն.—*Въ Редакцію „МЕГУ АЙАСТАНИ“ —Тифлисъ*։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—I) Առաջնորդները, II) Քաղաքական III) Բանասիրական, IV) Թղթակցութիւնք, V) Մանր լուրեր, VI) Խառն լուրեր, VII) Ֆելիէտօն, VIII) Յայտարարութիւնք, IX) Պատասխանիք Խմբագրութեան,

ԾԱՆՕԹ.։—„ՄԵՂՈՒԻՆ“ առաջիկայ տարին կը հրատարակվի շաբաթը ԵՐԵՔ անգամ, իսկ եթէ մէջտղները ներեն և՝ ՉՈՐՍ կամ աւելի անգամ։

ՅԱՅՍԱՐԱՏԱԿՈՒԱԾ 1884 ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ՄԻԵՒՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՀԵՏԵՒԵԱԼ ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնդրական մէջտղների մասին։—II. Առաջնորդող յօդուածներ հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ։—III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագիրների տեղեկութիւնների և կարծիքների։—IV. Տնտեսական և առևտրական հարցերի քննադատութիւն։—V. Յօդուածներ ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ։—VI. Աբրատքին տեսութիւն։ Յօդուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան հասարակական և քաղաքական նշանաւոր անցքերի մասին։—VII. Կրիտիկա և Մատենախօսութիւն։—VIII. Ֆելիէտօն։—IX. Խառն լուրեր։—X. Յայտարարութիւններ։

Տարեկան բաժանորդագինն է . . . . . 5 ր.
Կէս տարուանը . . . . . 3 ր.

Թիֆլիսում տօտրագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կնդրոնական գրավաճառանոցում»։
Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, въ Редакцію „Арцаганкъ“

ВЪ КАНЦЕЛЯРІИ ВОЕННАГО ГУБЕРНАТОРА КАРССКОЙ ОБЛАСТИ

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАРСЪ“

НА БУДУЩІЙ 1884 ГОДЪ.

Газета „Карсъ“ въ 1884 году будетъ издаваться совершенно на тѣхъ-же основаніяхъ какъ и въ прошломъ году, по той-же программѣ и подъ тою-же редакціею.

Условія подписки: съ доставкою и пересылкою въ годъ три рубля, за четыре мѣсяца одинъ рубль. Подписка принимается въ Канцеляріи Военнаго Губернатора, куда адресуютъ свои требованія и иногородные.

Отъ редакціи. Газета „Карсъ“ имѣетъ ближайшею цѣлью всестороннее изученіе новоприобрѣтенной Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея развитію и благоустройству. Цѣль эта можетъ быть достигнута въ той мѣрѣ, въ какой лица, имѣющія по своему положенію возможность собирать свѣдѣнія по тѣмъ или другимъ вопросамъ, касающимся Области, ея населенія и расположенныхъ въ ея предѣлахъ частей войскъ, выразятъ свое сочувствіе газетѣ и пожелаютъ оказать ея редакціи просвѣщенное свое содѣйствіе сообщеніемъ имѣющихся въ ихъ рукахъ свѣдѣній и матеріаловъ; поэтому мы просимъ этихъ лицъ не отказать намъ въ своемъ участіи и поспѣшить приведеніемъ въ порядокъ и сообщеніемъ редакціи находящихся у нихъ матеріаловъ; самая разработка этихъ матеріаловъ можетъ быть сдѣлана и въ редакціи, а потому литературные недостатки ихъ ни малѣйшимъ образомъ не должны стѣснять авторовъ ожидаемыхъ сообщеній.

Ադրէն մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «Հայկունի և Բաֆֆի «Կայծերը» վերնագրով մատենախօսութիւնը։ Բացառած է բաժանորդագրութիւն, իւրաքանչիւր բաժանորդագրութեան գինն է 50 կոպ։ Յանկացողք կարող են դիմել Բագու Սէյիդ Ամիրեանցին։

2—3

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го января 1884 г. Տպարան Ա. Ս., Մխիթարեանց ս. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.